ԱՐՑԱԽԻ ՔԱՂԱՔԱՏԵՂ ԲԵՐԴԱՎԱՆԸ

Ա. Բ. ՂՈՒԼՅԱՆ, Ռ. Ս. ԱԲԴԱՐՅԱՆ

Քաղաքատեղ կամ Մայրաքաղաք անվանվող հնավայրը գտնվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղի տարածքում, Թարթառ գետի աջ ափին, նշանավոր Ջրաբերդ ամրոցից 1,5 կմ դեպի արևելք։ Այն առաջին անգամ հիշատակվում է Ս. Ջալալյանցի կողմից. «Է աւերակ տեղի քաղաքի ի դժուարակոխ ձորամիջի, յորում են աւերակք բազմաց տանց և մեծամեծ ապարանից, ի սմա է պալատ քաջազօր իշխանին Մէլիք Ադամայ կառուցեալ սքանչելի ձևակերպութեամբ, զորով է արուարձան ընդարձակ ի պահպանութիւն նորին, ի վեր քան զայս պալատ է սագաձև մատուռ կառուցեալ ի թուին Հայոց ՉԹ ձեռամբ Խուռումայ և եղբօրն Վահրամայ շահին...»[1]։ Հետագայում ավելի հանգամանորեն բերդավանը նկարագրել է Մ. Բարխուտարյանցը՝ հիշատակելով այնտեղ եղած շինությունների մեծ մասը։ Այստեղ Քաղաքատեղը ներկայացվում է որպես Ջրաբերդի մելիքանիստ բնակավայրերից մեկը, իսկ նրա տարածքում գտնվող ապարանքը՝ վերագրվում XVIII դարում գավառի տեր Մելիք Ադամին[2]։ Ավելի ուշ ուսումնասիրողները Քաղաքատեղի ավերակների ու դրանց հետ կապված պատմական հանգամանքների մասին ոչինչ չեն ավելացրել[3]։ Բաֆֆին, հավանաբար նկատի ունենալով բերդավանի արևելակողմի հին հանգստարանի մատուռի բարավորի՝ Ս. Ջալալյանցի ու Մ. Բարխուտարյանցի հիշատակած 1160 թ. թվագրված արձանագրությունը[4], գրել է. «Մելիք Աթամը իր բնակության համար նորոգեց Քաղաքատեղ կամ Մայրաքաղաք կոչված ավերակների մոտ մի հոյակապ պալատ, որի մեջ տասներկուերորդ դարու վերջերում բնակվում էր Խաչենի և Շամքորի իշխան Վահրամ շահը»[5]։

Կա կարծիք այն մասին, որ «...հնավայրը Մայրաքաղաք անունով հիշվում է սկսած վաղ միջնադարից։ VII դարում, մի կարճ ժամանակ, այստեղ են նստել Աղվանքի կաթողիկոսները»[6]։ Այս տեղեկության սկզբնաղբյուրը թեև չի նշվում, բայց հայտնի է[7], և ինչպես հավաստում է նույն հեղինակը՝ «Աղվանքի կաթողիկոսության ամառանոցը սկզբից ևեթ եղել է Բերդակուր ամրոցը։ VII

---

1 Մարգիս Ջալալեանց. Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան. մասն Ա, Տփխիս, 1842, էջ 177։

2 Մակար Բարխուտարյանց. Արցախ Բագու, 1895, էջ 222—224։

3 Բաֆֆի. Երկերի ժողովածու. հ. 10, Երևան, 1959, էջ 175, 372։ Լեռ. Երկերի ժողովածու. հ. 3, գիրք Բ, Երևան, 1973, էջ 26—27։ Լեռ. Իմ հիշատակարանը. Շուշի, 1890, էջ 248։

4 «Թիւ ՉԹ. էր Կամաւն Աստուծոյ ես Խուռում (Հոիփսիմէ) շինեցի զեկեղեցիս, եղբայր իմ Վահրամ Շահ ի հիշատակ մեզ և ծնողաց մերոց ի յիշխանութեան Ուքանին և յամիրութեան Փախրայդինին և ի յառաջնորդութեան Տէր Սուքիասին. յաղաւթս...» (Արցախ, էջ 222. տե՛ս նաև Դիվան հայ վիմագրության. պրակ Ը, Երևան, 1982, էջ 95)։

5 Բաֆֆի, հ. 10 էջ 175։ Վահրամ շահ իշխանի պատմականության, ապրած ժամանակի և տիրապետության սահմանների հարցերը հայտնի չեն մատենագրական աղբյուրներից և չեն պարզաբանվել արդի պատմագրության մեջ։ Խնդրի լուսաբանումն այստեղ դուրս է մեր քննության շրջանակներից։

6 Լեռ. Երկերի ժողովածու. հ. 8, Երևան, 1985, էջ 541, ծան. 27 (Բ. Ուլուբաբյանի)։

7 Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի. Երևան, 1983, էջ 297, 345։ Կիրակոս Գանձակեցի. Պատմություն Հայոց. Երևան, 1961, էջ 198։

դարում Հովհաննես Բ կաթողիկոսը կաթողիկոսությունը տեղափոխում է Բերդակուր, ուր այն մնում է մինչև IX դար»[8]։ Սակայն հակասելով իրեն մի այլ առիթով, հեղինակը Բերդակուրը նույնացնում է Կաթողիկոսի քարի (Կաթողիկոսասար)[9] հետ՝ «Թարթառի ափին, Մարտակերտի շրջանի Լյուլասազ գյուղի մոտ»[10]։ Տեղացիների հավաստմամբ Բերդակուրը հենց Քաղաքատեղն է[11], բայց թե ինչքանով է դա ճշմարտացի, առայժմ դժվար է ասել։ Դա կպարզվի հետագայում, բերդավանի գտնվելու համար հնարավոր վայրերի ուսումնասիրությունից հետո։

Բերդավանը գոյատևել է նաև միջնադարում։ Հիշատակված 1160 թ. ունեցող արձանագրությունից բացի հնավայրի արևելյան ծայրամասի գերեզմանոցում եղել են 1250 և 1551 թթ. թվագրված խաչքար և տապանաքար[12]։ Ապարանքը ևս, ինչպես նկատել է Մ. Բարխուտարյանցը, ենթադրել Բաֆֆին և ինչպես ցույց է տալիս նրա ճարտարապետական շինարարական քննությունը, ամենայն հավանականությամբ հիմնադրվել է միջնադարում։ Կարևոր է նաև ավերակ բերդավանի Քաղաքատեղ անվան հիշատակությունը XVIII դարի հայ-ռուսական հարաբերությունների երկու փաստաթղթում։ Դրանցից մեկում նամակագրության վայր է հիշվում «քաղաքայ տեղի բերթը» (1724 թ.)[13], իսկ մյուսից տեղեկանում ենք, որ 1785 թ. հուլիսի 5-ին այստեղ՝ «Ջրաբերդ բնակավայրի մոտ գտնվող Քաղաքատեղ գյուղում»[14] հավաքվել էին Արցախ-Ղարաբաղի հոգևոր ու աշխարհիկ տերերը, գավառի իշխան Մելիք Ադամի մահվան առթիվ։ Պարզ է, որ Քաղաքատեղ հատուկ անունը այստեղ պետք է հասկանալ նաև բառացի[15]։

XVIII դարի սկզբում սղնախների ազատագրական մարտերի ժամանակաշրջանում և դարի կեսերից հետո, Մելիք Ադամի իշխանության օրոք Ջրաբերդ-Քաղաքատեղը ազգային անկախության պայքարում համախոհ Ջրաբերդ-Գյուլիստան միացյալ գավառի ու ռազմաքաղաքական միավորման կենտրոնն էր, կապված այդ պայքարի մյուս գործուն օջախների՝ Գյուլիստան բերդի, Երիցմանկանց և Եղիշե առաքյալի վանքերի, հին Մոխրաթաղի ու Թալիշի

---

8 Բ. Ա. Ուլուբաբյան. Խաչենի իշխանությունը X—XVI դարերում. Երևան, 1975, էջ 371։

9 Մխիթար Գոշ. Կաթողիկոսք և զկար Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու.— Ղ. Ալիշան. Հայապատում. Վենետիկ, 1901, էջ 386։

10 Խաչենի իշխանությունը, էջ 116։ Այս կարծիքին է և Վ. Առաքելյանը. տե՛ս Մովսես Կաղանկատվացի. Պատմություն Աղվանից աշխարհի. Երևան, 1969, էջ 289։

11 Մեծ Շեն գյուղի դպրոցի ուսուցիչ Բ. Մովսեսյանի դրի առած ավանդությունների մեջ կա մեկը, որտեղ հիշատակվում է Բերդակուրը՝ Քաղաքատեղ կամ Մայրարաղար անվանումով։ Նույն ավանդության մեջ բերդավանի և Ջրաբերդի կառուցումը կապվում է Հնաագույն Խրայելյան անվանված մելիքական տոհմի նախորդների հետ։

12 Մ. Բարխուտարյանց. Արցախ, էջ 222։ Դիվան, պրակ V, էջ 95—96։

13 П. Т. Арутюнян. Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века. М., 1954, с. 208, տե՛ս տողատակին, АВПР. ф. Сношения России с Арменией. 1724, д. № 24, л. 19, փաստաթղթի տակ. «զրվեցաւ դիրս բաղարայ տեղին բերթումն...»։

14 А. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия. Ереван, 1947, с. 242, док. № 27. «Писано при урочище Чараперте в селе Кагакатег, июля 5-го дня 1783-го года» (փաստաթղթի հայերեն բնագիրը կորած է համարվում)։

15 Այս առումով ուշագրավ է, որ Պ. Տ. Հարությունյանի նշած վերոհիշյալ 1724 թ. ունեցող փաստաթղթում «քաղաքայ տեղին բերթումն» արտահայտության մեջ տեղի անունը (՞) փոքրատառ է դրված, իսկ «քաղաքայ տեղին» բառերը առանձին-առանձին (հմմտ. Բաֆֆի, հ. 10, էջ 175)։

ապարանք-ամրոցների և այլ ամբողջությունների հետ[16]։ Եթե նկատի առնենք մի կողմից այն, որ սկսած վաղ միջնադարից գրավոր աղբյուրներում Ջրաբերդ (նաև Ջարաբերդ, Ջրաբերդ, Ճարաբերդ) անվանումը օգտագործվում է և՛ գավառ, և՛ կենտրոն, և՛ ամրոց իմաստներով, իսկ մյուս կողմից՝ Ջրաբերդ ամրոցի ու Քաղաքատեղ բերդավանի մոտիկությունը (մոտ 1,5 կմ), ապա, թվում է, կարելի է ենթադրել, որ հնուց ի վեր Ջրաբերդ անվան տակ հասկացվում էր ամրոց-բերդավան ամբողջությունը։ Ավելացնենք, որ դատելով ամրոցի ու բերդավանի մանրամասն չափագրություններից ու նրանց միջանկյալ տարածքի տեղազննումից, ամրոցն իր հսկայական չափերով և անմատչելիությամբ, խիստ կտրտված տեղանքով ու պաշտպանական շինությունների առատությամբ հիմնականում ծառայել է որպես պատսպարան շրջակա բնակչության համար և եղել է գավառի ղորեղ բերդամրոց-կենտրոն։ Մինչդեռ բերդավանը, ունենալով հանդերձ իր պաշտպանական համակարգն ու անմիջական կապը ամրոցի հետ, համեմատաբար մատչելի է եղել և իր տեղադրությամբ հարմար որպես բնակավայր և իշխանական աթոռանիստ։ Այս առումով ինչ-որ չափով ուղղակի-բառացի իմաստով պետք է հասկանալ նաև հնավայրի մյուս՝ Մայրաքաղաք անվանումը։ Դեռ միջնադարից իշխանանիստ բերդաքաղաքի փառքն ու համբավը երկրամասում ու գավառում պատճառ են դարձել այն անվանելու Մայրաքաղաք[18]։

Այսպանից կարելի է հետևցնել, որ ամբողջ միջնադարի ընթացքում հռչակավոր Ջրաբերդ ամրոցի հարևանությամբ (գուցե նաև անվամբ) գոյատևած իշխանանիստ բերդավանը XVIII դարում բարգավաճում դառնում է գավառի նշանավոր կենտրոններից մեկը և մելիքական աթոռի ժառանգորդ Մելիք Ադամ Իսրայելյանը այնտեղ վերակառուցում լրացնում է հնավանդ ապարանքը, դարձնելով այն իր ձմեռանոցը[19]։

Մելիք Ադամի իշխանությունը առանձնապես հզորացած ենք տեսնում XVIII դարի 70-ական թթ. հետո, երբ նա և Գյուլիստանի Մելիք Հովսեփը իրենց հպատակներով, Շուշվա Իբրահիմ խանի հորդորանքով 1767 թ. Գանձակի մոտերքից վերադառնում են իրենց հայրենի տիրույթները[20]։ Անկասկած այս տարիներին (1767—1783 թթ.) պիտի վերագրել ապարանքի վերակառուցումը, մանավանդ, որ Մելիք Ադամի մյուս՝ Հին Մոխրաթաղում գտնվող ապարանքը ևս կառուցվել է նույն ժամանակահատվածում (1771 թ.)[21]։

---

16 П. Т. Арутюнян. Освободительное движение армянского народа. с. 226—228.—Армяно-русские отношения в первой трети XVIII века. сборник документов. Т. II, часть I. Ереван, 1964, с. XXXIX; т. II, часть II. Ереван, 1967, с. 113, 282—283; Л. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение..., с. 15—42 и далее; М. Персисян. Из истории русско-армянских отношений, книга первая. Ереван, 1956, с. 50, 256. *Դարաշրջանի պատմական իրադրության մասին մանրամասն տե՛ս նաև՝* Պաֆֆի, *հ. 10,* Լեո, *հ. 3, դիրք Բ,*

17 *Մովսես Կաղանկատվացի. էջ 157, 354։ Կիրակոս Գանձակեցի. էջ 359։ Մխիթար Գոշ. Կաթողիկոսք եւ դէպք Աղուանից աշխարհին, էջ 387։*

18 *Հայտնի են և այլ դեպքեր, երբ իշխանական աթոռանիստ բնակավայրը անվանվում է Մայրաքաղաք (օրինակ՝ Եղեգիս գյուղաքաղաքը Սյունիքում). տե՛ս* Դ. Ալիշան. *Սիսական. Վենետիկ, 1893, էջ 146։ Ս. Ջալալյանցի մոտ Մայրաքաղաք անունով հիշատակվում է և Արցախի Մեծկվենք գավառի եպիսկոպոսարանը այժմյան Վաղուհաս գյուղի մոտ. տե՛ս Ս. Ջալալեանց. Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան. մասն Բ, Տփխիս, 1853, էջ 231։*

19 *Մ. Բարխուտարյանց. Արցախ, էջ 224։ Նույնի՝ Պատմություն Աղվանից. հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 53։*

20 Л. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение..., с. 17; М. Персисян. Из истории русско-армянских отношений, с. 50, 112—113.

21 *Մ. Բարխուտարյանց. Արցախ, էջ 218։ Նույնի՝ Պատմություն Աղուանից, էջ 101, Դիվան, պրակ V, էջ 94։*

Տեղագրությունը և բաղաքաշինական կառուցվածքը (աղ. 1, նկ. 2)։ Բերդավանը գտնվում է Թարթառ գետի աջ ափին, նրանից 600—800 մ հեռավորության վրա, ձորերով մասնատված բարդ ռելիեֆ ունեցող տեղանքում։ Այն կառուցված է ռազմաստրատեգիական և տնտեսական առումով նպաստավոր վայրում։ Պաշտպանունակությունը պայմանավորված էր նախ տեղանքից բխող հանգամանքով, ապա՝ իր թիկունքում այնպիսի մի հզոր ամրոցի առկայությամբ, ինչպիսին Ջրաբերդն է։ Տնտեսապես էլ հարմար էր, քանի որ բերրի ու մշակովի հողեր ուներ ոչ միայն քաղաքի տարածքում, այլև նրա մերձակա տարածություններում։ Բերդավանի տարածքը հյուսիսից և հարավից սահմանափակված է ձորերով, որոնք կենտրոնական երկու ձորերի հետ բնակավայրի ստորին մասում միավորվում են մեկի մեջ, վերջինս էլ շարունակվում է Թարթառ գետին ուղղահայաց՝ հատվելով նրա հետ։ Ամբողջ տեղանքը արևելք-արևմուտք ուղղությամբ ունի ընդհանուր թեքություն։ Արևելյան կողմում քաղաքի վերջը կարելի է համարել ամենաբարձրադիր մասը, որտեղ գտնվում են եկեղեցին և գերեզմանոցը։ Այստեղից դեպի արևելք ընկած տեղանքը դրժվարանցանելի է և նույնպես նպաստավոր պաշտպանության տեսակետից։ Ամբողջովին ավերված եկեղեցուց ոչինչ չի պահպանվել։ Նրա շուրջը տարածված գերեզմանոցում կան բազմաթիվ տապանաքարեր, որոնք մասամբ ծածկվել են հողով։ Գետնի երեսին գտնվողների վրա արձանագրություններ չկան։

Բերդավանն այժմ գրեթե անտառածածկ է և զբաղեցնում է մոտ 54 հա տարածություն։ Նրա կառուցվածքը թելադրված է տեղագրական պայմաններով։ Պաշտպանական հիմնական կետերն են հանդիսացել բնակավայրի գրեթե կենտրոնում տեղադրված ապարանքը և նրա հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան մասերում գտնվող Ծռաբուրգ և «Կախաղան» կոչվող ամրոցները։ Ամրացված այս երեք հենակետերի շուրջն էլ կառուցվել են բնակելի և տնտեսական շինությունները։ Քաղաքի երկայնական առանցքն է կազմում միակ ճանապարհը, որն անցնում է ամբողջ տարածքով՝ հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք։ Կառուցվածքներն իրար հետ կապող մնացած ուղիները այժմ արահետներ են։

Պահպանված ուշագրավ շինություններից են Քաղաքատեղի հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան ծայրամասերում գտնվող երկհարկանի աշտարակաձև կառույցները, որոնց Մ. Բարխուտարյանցն անվանում է դիտարաններ[22]։ Դրանց հորինվածքի ուսումնասիրությամբ չի հաստատվում այդ ենթադրությունը։ Հարավ-արևմտյան աշտարակի մոտ ամբողջական վիճակում մնում է քառակուսի հատակագծով մի քարաշեն գլխատուն (4,6×4,6մ), որի ծածկն իրականացված է գոցվող թաղի ձևով։ Պատերում որմնախորշեր չկան, երդիկ չունի. բնական լույսը գալիս է մուտքային պատի թաղի մեջ բացված, դեպի ներս լայնացող լուսամուտից (աղ. II, գծ. 7)։ Հիշատակության է արժանի նաև ապարանքից հյուսիս-արևմուտք, ձորի ձախ ափին կառուցված լաղնիքը։ Այն այժմ կիսավեր է։ Նույն ձորի աջ ափին, աղբյուրից մի փոքր ներքև գտնվող սրանոցը ամբողջովին ավերված է։

Տեղանքի հնարավորություններից ելնելով քաղաքի ամբողջ տարածքում բնակարանները կառուցվել են անկանոն տեղադրությամբ։ Դրանցից համեմատաբար լավ պահպանվել են ապարանքի հյուսիս-արևելյան մի բարձր բլրի վրա գտնվող երկու կից սենյակի պատերը։ Բերդավանն ունեցել է երկու մուտք՝ «արևմտյանն՝ խոր ձորին ստորոտովն, որ համարյա թև հպած է Թարթառ գետի աջ եզերքին, իսկ արևելյան կողմի մուտքն նույն ձորի վերի ծայրովն։ Երկու մուտքերն ամրապնդված է եղել քարուկիր պատով, որք քանդված են այժմ»[23]։ Մ. Բարխուտարյանցը արևելյան մուտքի մոտ գտնվող քարայրները համարում է դոնապանների բնակարաններ[24]։ Քաղաքի կառուցողներր

22 Մ. Բարխուտարյանց. Արցախ, էջ 222—223։

23 Նույն տեղում, էջ 222։

24 Նույն տեղում, էջ 224։





Աղ. 1. Նկ. 1. Իշխանական ապարանք (հատակագիծ, ճակատ, լայնական կտրվածք)

Նկ. 2. Բերդավանի գլխավոր հատակագիծը

հնարամիտ են օգտագործել տեղանքի յուրահատկությունները։ Մուտքերի և ամրացված հենակետերի նման տեղադրությունը կարելի է դարձրել թշնամու բոլոր հնարավոր մոտեցումների դեպքում լավագույն ձևով պաշտպանվել և, անհրաժեշտության դեպքում, հարմար ճանապարհներով կապվել անառիկ համարվող Ջրաբերդ ամրոցի հետ։

Իշխանական ապարանք (աղ. I, գծ. 1, նկ. 1,2)։ Քաղաքատեղում պահպանված շինություններից ամենանշանակալիցը իշխանական ապարանքն է։ Այն կառուցված է բերդավանի հատակագծային առանցքը կազմող միակ ճանապարհից ներքև։ Տեղանքի ընձեռած հնարավորություններն օգտագործված են յուրօրինակ ձևով. քարե կիսակլոր բուրգեր ունեցող պատնեշի միջոցով ստեղծվել է արհեստական դարավանդ, որտեղ էլ կառուցվել են արտաքուստ ուղղանկյուն պարագծով, ներքին բակի շուրջը խմբված սենյակները։ Ապարանքը երկայնական առանցքով (արտաքին չափումով՝ 23,3×36,5 մ) տեղադրված է հարավ-արևելք—հյուսիս-արևմուտք ուղղությամբ։ Այն շրջակայքի նկատմամբ ունի իշխող դիրք և պաշտպանված է բոլոր կողմերից։ Հյուսիս-արևելյան ուղղությամբ, մոտ 10 մ հեռավորությամբ կառուցված հենապատի շնորհիվ, այն աննկատ է մնում ճանապարհի կողմից, իսկ բերդավանի գրեթե բոլոր կետերից տեսանելի է միայն հարավ-արևմտյան ճակատը։

Ապարանքի ավերակներում դեռևս Մ. Բարխուտարյանցն է նկատել «հին ու նոր որմերի» տարբերություն և ենթադրել, որ «Մելիք-Ադամն նորոգած է ապարանս, որ եղած է կանխավ»[25]։ Ավերակների չափագրություններն ու զննումը հաստատում և որոշակի են դարձնում այդ։

Մելիք Ադամին վերագրվող շինությունների խումբը բաղկացած է գրեթե միատեսակ տասը սենյակներից։ Չորս սենյակ (4,0×7,0 մ) բակի հյուսիս-արևելյան կողմում են, հպված լանջին և ազատ լայնական ճակատներում մուտքեր և պատուհաններ ունեն դեպի բակ (հյուսիսային անկյան սենյակի պատուհանը դեպի դուրս է)։ Բոլոր պատերը պահպանվել են մինչև ծածկին անցման սահմանը (2,7 մ առավելագույն բարձրությամբ) և ունեն որմնախորշեր, իսկ եզրային երկու սենյակները՝ նաև բուխարիներ։ Այս սենյակների դիմաց, բակի հակառակ՝ հարավ-արևմտյան կողմում կան երկայնական պատերով դեպի բակն ուղղված ևս չորս սենյակների մնացորդներ։ Մեզ է հասել միայն բակի կողմի պատը՝ մուտքերով ու որմնախորշերով, իսկ լայնական ու ձորահայաց պատերը փլվել են այդ մասում դարավանդի բրգավոր պատնեշի հետ։ Սենյակների այս շարքի եզրերում լայնական կողմով կից երկու սենյակներով (3,9×5,5 մ) ընդհանրանում է ուղղանկյուն, 9,0×17,0 մ չափերով բակը[26], որի հարավ-արևելյան և հյուսիս-արևմտյան կողմերում առաջացած նրբանցքները ավարտվում են ապարանքի արտաքին պատերից բացվող մուտքերով։ Պահպանվել են այս նրբանցքների երկրորդ հարկի պատերի հետքերը[27], որոնցից հյուսիս-արևմտյանն ունի պատուհան՝ կամարակապ մուտքի վերևում, իսկ հարավ-արևելյանի պատերում նկատելի են որմնախորշերի հետքեր։

Նկարագրված սենյակներն ու նրբանցքները եղել են գերանածածկ. գերանների հենախորշերը դեռևս մնում են լայնական պատերում։ Հյուսիս-արևելյան շարքի սենյակների երկարության չափը (7,0 մ) նման գերանածածկի դեպքում ենթադրում է միջանկյալ հենասյուների երբեմնի գոյություն[28]։ Հորինվածքային ընդհանրությամբ հանդերձ նշված չորս սենյակները որմնախորշերի չափերի ու տեղադրության առումով տարբերվում են մյուս վեցից. վերջիններում խորշերը համեմատաբար լայն են ու բարձր, դասավորությունը պատերում՝ խիստ կանոնավոր։

---

25 Նույն տեղում։

26 Մ. Բարխուտարյանցն անվանում է «ընդարձակ դահլիճ» (տե՛ս նույն տեղում, էջ 223)։

27 Մ. Բարխուտարյանցն անվանում է «պատշգամբ» (տե՛ս նույն տեղում)։

28 Ապարանքի բոլոր փայտե մասերն ու սրբատաշ եզրաքարերը հանվել և տարվել են։

Մոտոլի անջատելով նկարագրված սենյակները ապարանքի մյուս մասերից, ակնառու է դառնում դրանց հորինվածքային կապը մի կողմից Արցախի ե Սյունիքի XVIII դարի մելիքական ապարանքների[29], մյուս կողմից՝ Հայաստանի XIX դարի ե ավելի ուշ շրջանի բազմաբաժին գեղջկական ու քաղաքային բնակարանների հետ։ Լայնական ճակատներով դեպի բակն ուղղված սենյակների ու դրանց հակադիր սենյակների շարքերը, ներքին բակը՝ կողային մուտքերով, պարփակվածությունը, ահա այն հիմնական ընդհանրությունները, որ ապարանքն ունի Քալիշի ու Մոխրաթաղի ապարանքների[30], նմանատիպ այլ շինությունների հետ։ Ապարանքի ձորակողմյան սենյակներն իրենց ձևերով ու համադրությամբ հիշեցնում են հետագայում լայնորեն տարածված, սենյակների միաշարք դասավորությամբ բնակարանների հորինվածքային կերպը։

Տեղական անտառանյութի հարստությամբ, թերևս նաև ապարանքի կառուցման կարճ ժամկետով է պայմանավորված սենյակների ծածկերի շինվածքային ձևերում վերադարձը դեպի գեղջկական օդաներին ներհատուկ գերանածածկ լուծումը՝ շրջակա բնակավայրերում նույն դարի քարաշեն, թաղածածկ շինությունների կողքին։ Ինչպես երևում է Ջրաբերդ և Գյուլիստան ամրոցների միջնաբերդերում գտնվող իշխանական բնակարանների ծածկերի մնացորդներից[31], սենյակների փայտաշեն, գերանածածկ կառուցելակերպը ևս իշխող վերնախավի ապարանքներում գործածական է եղել (քարաշեն ձևերի հետ միաժամանակ)։ Այս առումով հնարավոր է դառնում քննվող ապարանքի հորինվածքում ենթադրել փայտածածկ բնակարաններին բնորոշ այլ տարրեր ևս՝ փայտե սանդուղքներ բակի կողմից, դեպի նրբանցքների վերնահարկերը, պահոնակ-գիրաններով պատշգամբ՝ ձորահայաց սենյակների դրսից և այլն։

Ներքին, բազմանշանակ բակով կապվում ընդհանրանում է սենյակների նկարագրված խումբը, որպես միաժամանակ (իմա՝ XVIII դարի կեսերից հետո, Մելիք Ադամի օրոք) իրականացված ամբողջական մտահղացում։

Սենյակների մյուս խումբը կազմում է նկարագրվածի շարունակությունը դեպի հարավ-արևելք և հատակագծային անկանոնությամբ ու շինվածքային անհամապատասխանությամբ առանձնանում է ընդհանուրից։ Պարզորոշ է երկու խմբի շինությունների միացման տեղերում պատերի անհամատեղելիությունն ըստ ուղղության ու կառուցողական կապի։ Բակի արևելյան անկյունամասից մուտք կա դեպի մի թաղակապ նախասենյակ, որին կից են երկու փոքր, քառակուսի (2,1×2,1) թաղածածկ շինություն։ Սրանք հատակի անկանոն բացվածքներով կապվում են նույն չափի ստորին հարկերի հետ, որոնց ժայռափոր գետնուղու կամարակապ մուտքը բացվում է բուրգերից մեկի եզրով[32] (բրգավոր պատնեշի բարձրությունը այստեղ առավելագույնն է՝ 8,5 մ՝ ձորի հատակից մինչև շինությունների այժմյան հատակի նիշը)։ Հիշյալ նախասենյակի թաղածածկի մնացորդը վկայում է, որ այն կառուցված է կից սենյակի պատից ավելի վաղ, քանի որ թաղի կորի չպահպանված շարունակությունը կից սենյակի պատին հենարանի տեղ չունի։ Նախասենյակի մուտքի պատը այդ շարքի սենյակների բակահայաց պատի ուղղությունից փոքր-ինչ հետ է դրված, իսկ լանջին հպված կորագծային հենապատի ծայրը ուղիղ գծով անջատվում է կից շինությունից։ Հավանաբար հենց այս անհամապատաս-

---

29 Հմմտ. Հայկական ճարտարապետության պրոբլեմներ, Թորոս Թորամանյանի 120-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջան, զեկուցումների թեզեր. Երևան, 1984, էջ 21—23 75—77, աղ. 1։

30 Նույն տեղում։

31 Երկու ամրոցներն էլ լուսագրված են։

32 Ըստ Մ. Բարխուտարյանցի՝ «գետնահարկով գուրս հանած է արտաքնոցի և խոհանոցի միացյալ ոտքը» (տե՛ս Արցախ, էջ 223)։

խանություններն է նկատի ունեցել Մ. Բարխուտարյանցը, երբ գրել է «հին ու նոր որմերի» տարբերության մասին[33]։

Բակի հարավ-արևելյան նրբանցքից մուտքեր կան դեպի երկու գրեթե քառակուսի (5,8×6,2 մ և 6,0×5,0 մ) սենյակներ, որոնցից պահպանվել են միայն հիմնապատերը։ Սրանք հիշեցնում են իշխանական տներում հայտնի պույգ գլխատները, սակայն ի տարբերություն դրանց՝ ճշտորեն կողք կողքի չեն կառուցված, չունեն նրանց վայելչությունն ու կենտրոնական դիրքը ապարանքի այժմյան հորինվածքում[34]։ Հավանաբար այս սենյակները երդիկավոր ծածկեր են ունեցել. պահպանված պատերում լուսամուտների հետքեր չկան։

Նրբանցքով այս սենյակներին կից է դարավանդի հարավային անկյունում պահպանված խորշաձև բաժանմունքով դահլիճը (3,75×7,45 մ)։ Սա, անշուշտ, եղել է տեղի իշխողի գահադահլիճը. խորշաձև մասում էլ գրվել է գահը։ Դահլիճն ունի դեպի ձորն ուղղված երեք լայն (1,0 մ) լուսամուտ, ամբողջովին պահպանվել է խորշաձև մասի թաղածածկը։ Նրբանցքին հարող երկայնական պատի և իրեն կից սենյակի նույնանուն պատի գծային անհամապատասխանությունից, ինչպես նաև ծածկի քարաշեն ձևերի կիրառությունից բացահայտ երևում է, որ թաղակապ դահլիճը ժամանակագրական առումով նախորդել է ձորահայաց մյուս սենյակներին։ Ավելին, բրգավոր պատնեշի վրա, որը դահլիճի ձորակողմի պատի ստորին շարունակությունն է կազմում, նկատելի է հետագայում հավելված պատի շերտի եզրագիծը։ Դրանով որոշակիորեն պարզվում է ապարանքի հնավանդ մասի սահմանը։

Խորշաձև բաժանմունքով դահլիճի հորինվածքը հայտնի է Խաչենի իշխանական ապարանքում (XIII դար), որը նույնպես եղել է թաղակապ ու կողային լուսավորությամբ[35], Սյունիքի Հորս գյուղի միջնադարյան իշխանական տան մնացորդներում[36]։ Լայն պատուհանների առկայությունը սենյակների պաշտպանության տեսակետից անվտանգ պատերում, հայտնի է միջնադարյան Հայաստանի պալատական ճարտարապետության ողջ ընթացքում (Աղթամար, Անբերդ, Անի), ինչպես նաև Արցախի ուշ միջնադարյան աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների տներում (Ջրաբերդի և Գյուլիստան ամրոցի միջնաբերդի բնակարաններ, Թալիշի ապարանք, Երիցմանկանց, Եղիշե առաքյալի, Ամարաս, Դադի և այլ վանքերի բնակելի տներ և վեհարաններ)։ Ուստի ենթադրելի է, որ դարավանդի եզրի մյուս, չպահպանված սենյակները ևս, չնայած կառուցվել են ավելի ուշ, նույնպես ունենային լայն պատուհաններ ձորակողմյան ճակատում։

Մելիքական բազմանդամ ընտանիքի պահանջմունքներին համապատասխան հնավանդ ապարանքից մնացած սենյակներին ավելացվել են նորերը։ Դրանք էլ դարձել են հիմնական բնակելի մասը, իսկ գլխատները մնացել են հորինվածքային կենտրոնից՝ բակից, համեմատաբար հեռու և, ըստ երևույթին, երկրորդական, տնտեսական սենյակի նշանակություն են ունեցել։ Բակի հյուսիս-արևելյան չորս սենյակները հիմնական բնակելին են, եզրայինները՝ բուխարիով տաքացվող։ Այս հանգամանքը բնորոշ է մեզ հայտնի գրեթե բոլոր մելիքական տների բնակելի մասերին և հիմք է տալիս մտածելու, որ եզրային սենյակներում եղած բուխարիները ծառայել են լանջին հպված, խոնավացմանը ամենաշատը ենթակա պատերի չորության ապահովմանը։ Դարավանդի-

---

33 Նույն տեղում, էջ 224։

34 Եթե նկատի առնենք, որ նման գլխատները ապարանքներում սովորաբար կենտրոնական տեղ են գրավել, ապա մնում է ենթադրել, որ դրանք էլ այդպիսին են եղել ժամանակին, հորինվածքային միանգամայն այլ լուծման մեջ։

35 Ա. Բ. Ղուլյան. Խաչենի իշխանական ապարանքը.—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1984, № 3, էջ 51—57, գծ. 1։

36 Ն. Մ. Գապուխյան. Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը. Երևան, 1972, էջ 75, նկ. 23։

եզրի չորս և դրանց կից երկու սենյակները ևս պետք է բնակելի համարել, որոնք, հավանաբար, ծառայել են նաև որպես ընդունարան-հյուրասենյակ։ Բակն էլ այստեղ յուրատեսակ բնակարան է, շատ հարմար ամառային բնակության համար։ Որ բակը ծառայել է և այդ նպատակին, վկայում են շրջապատող պատերին մնացած որմնախորշերը։ Բակն իրար է կապում բնակելի սենյակները, հարմար է տարբեր նպատակներով հավաքատեղի լինելու համար։ Վտանգի դեպքում ապարանքում ու բակում պատսպարվածները կարող էին գետնուղիով հեռանալ կամ համալրում ու մատակարարում ստանալ։ Ապարանքի բակի հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան եզերում, միահարկ շինություններից վեր պարզված աշտարականման վերնահարկերից կարելի էր դիտել ամբողջ բերդավանը, տեսողական կապ ունենալ բնակավայրի մյուս պաշտպանական կետերի հետ, հսկել ապարանքի մուտքերը։ Վերնահարկերով է իրականացվել կապը սենյակների հարթ կտուրի հետ, այն տարբեր նպատակներով օգտագործելու համար։

Ապարանքի տիրոջ գահադահլիճ-ընդունարանը ներկա հորինվածքում կենտրոնական տեղ չունի։ Հանդիսանալով երբեմնի իշխանական պալատի հիմնական դահլիճներից մեկը, այն ավելացված բազմաթիվ սենյակների կողքին դարձել է ապարանքի ամենահանդիսավոր ու նվիրական տեղը՝ մելիքի ընդունարան-առանձնասենյակը[37]։

Դահլիճի երբեմնի կամարակապ պատուհաններից ընդարձակ տեսարան է բացվում դեպի ամբողջ բերդավանն ու Թարթառի ձորը, դեպի Ջրաբերդ ամրոցն ու Երիցմանկանց վանքը։ (Ի դեպ, Ջրաբերդի իշխանական բնակարանն ու Երիցմանկանց վանքի վերնարանը նույնպես լայն պատուհաններ ունեն ձորի կողմից)։ Միջնադարյան Հայաստանի ճարտարապետությունից հայտնի են շատ պալատական շենքեր, որոնք կառուցվել են հաշվի առնելով դահլիճների պատուհաններից երևացող բնության գեղեցիկ տեսարանները[38]։ Քաղաքատեղի, Ջրաբերդի և Երիցմանկանցի բնակարաններում այդ երևույթը լավագույն արտահայտություն է գտել։

Ապարանքը յուրահատուկ է նաև իր կառուցվածքով։ Այն շինված է մեծ թեքություն ունեցող ժայռոտ ձորալանջի վրա։ Բրգավոր պատնեշի և դրանով ստեղծված դարավանդի կայունությունն ապահովելու համար ձորեզրի սենյակների լայնական պատերը շարունակվում են դարավանդի ողջ խորությամբ, իրենց վրա վերցնելով հարթեցնող հողային լիցքի արտահրող ուժերը։ Այդ նպատակին են ծառայում նաև լայնական պատերի միջակայքում պատնեշի կայունությունն ամրապնդող կիսակլոր բրգաձև ելուստները, որոնցից եզրայինները եղել են շինության ամբողջ բարձրությամբ, իսկ միջանկյալները հասել են մինչև ձորեզրի սենյակների հատակի մակարդակը։ Բուրգերը դեպի վերև նեղանում են և դեպի ներս ունեն որոշ թեքություն։ Նման թեքություն ունի նաև պատնեշը։ Հետագայում լքվելով ու մնալով անխնամ, այս շարքի սենյակների ձորահայաց պատն ու դրա ստորին շարունակությունը կազմող բրգավոր պատնեշը փլվել են, բացառությամբ հնավանդ դահլիճի, որի հատակն ամենամոտն է ժայռե հիմքին։ Առավել կայուն լայնական, խորացող պատերը մնում են անփոփոխ։ Պահպանվել են նաև միջանկյալ բուրգերի ստորին մասերը։ Ապարանքի պատերը շարված են անկանոն ու մանր տեղական, դեղնանարնջագույնի երանգներով հարուստ որձաքարից, առատ կրաշաղախի կիրառությամբ։ Հնագույն մասի պատերի հաստությունը 0,9 մ է, մյուսներինը՝ 0,8 մ։ Բակի պարագծով, որմնախորշերի ու մուտքերի վերին եզրի բարձրությամբ պատերում կան անկանոն շարվածքի կայունության բարձրացման նպատակով դրված փայտե գոտիներ։

---

37 Մելիքական տներում ընդունարանը միշտ էլ ամենախնամքով շինված մասն է եղել (տե՛ս Ն. Ծ. Պապուխյան. նշվ. աշխ., էջ 71—73։ Հ. Փափաղյան. Մելիք Եգանի ընդունարանի վիմագիր արձանագրությունը.—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1985, № 5, էջ 75—78)։

38 Հմմտ. Ս. Խ. Մնացականյան. Աղթամար. Երևան, 1983, էջ 21—22։

Վերոհիշյալ յուրահատկությունների շնորհիվ ապարանքն առանձնանում է մեզ հայտնի պալատական կառույցների մեջ և գալիս է լրացնելու մեր պատկերացումները միջնադարյան Հայաստանի իշխանական բնակարանների հորինվածքների մասին։



Աղ. II. 1. «Կախաղան» ամրոց. 2. Եռարուրգ ամրոց. 3. Հյուսիսային աշտարակ. 4. Հարավային աշտարակ. 5. Գոմ-ախոռ. 6. Բաղնիք. 7. Գլխատուն

Ապարանքից դեպի հարավ-արևելք, 10,5 մ հեռավորությամբ, երկայնական պատով ժայռալանջին հպված, կառուցված է մի նեղ ու երկար շինություն (ներքուստ՝ 4,1×23,9 մ), որը եղել է գոմ կամ ախոռ[39] (աղ. II, գծ. 5)։ Սա ունի մեկ մուտք՝ ապարանքին նայող կարճ ճակատի անկյունում և մի փոքր, անկանոն հատակաձևով սենյակ՝ նույն պատի մյուս անկյունում։ Մուտքի պատը ունի երկու, իսկ լանջին հպված երկար պատը՝ 16 կամարակապ, 70 սմ ընդմիջումով կառուցված որմնախորշեր (53×58 սմ)։ Ձիանոց-ախոռը հարմար է տեղադրությամբ. լանջի թեքության շնորհիվ այն, ըստ երևույթին պաշտպանական նկատառումով, տեսանելի չէ ճանապարհի կողմից, իսկ մուտքը բացվում է ապարանքի հարավ-արևելյան մուտքի հանդեպ։ Որմնախորշերը

39 Մ. Բարխուտարյանց. Արցախ, էջ 224։

ախոռի մսուրներն են, յուրաքանչյուրը մեկ ձիու համար։ Փոքր շինությունն էլ, հավանաբար, հատկացվել է ձիերի կերը և հանդերձանքը պահելու։

Ախոռի կամարաշեն որմնախորշերն ու կորագիծ պատերի առկայությունը հիշեցնում են ապարանքի հնագույն, քարաշին մասերի կառուցելակերպը։ Հնարավոր է, որ այժմ չպահպանված և փայտե ծածկի հետքեր չունեցող ախոռասարահի ծածկը նույնպես լիներ քարաշեն՝ թաղակապ։ Այս հանգամանքը, ինչպես նաև ախոռի նպաստավոր դիրքը հատկապես ապարանքի հին շինությունների նկատմամբ, հիմք են տալիս կարծելու, որ դրանք, թերևս, կառուցվել են միաժամանակ։ Ախոռի մուտքից փոքր-ինչ դեպի արևմուտք, ձորալանջին կա մի 4,5×5,9 մ չափերի կիսավեր սենյակ։ Մուտքը արևմտյան կողմից է, պատերում այլ բացվածքներ կամ խորշեր չկան, ծածկ չունի։ Ենթադրելի է, որ կապված է եղել ախոռի հետ, գուցե որպես ձիապանների սենյակ։

Կախաղան (աղ. II, գծ. 1, նկ. 4)։ Այս ամրոցը, որն ավանդաբար անվանվում է «կախաղան»[40], զբաղեցնում է ձորի գրեթե ստորոտից վեր խոյացող, մոտ 50 մ բարձրություն ունեցող ժայռաղանգվածի հարթ գագաթը։ Պարսպապատերը պահպանվել են միայն ձորի կողմից, որոնք ժայռի ռելիեֆին համապատասխան պատում են նրա լանջերը և այստեղ նրանք ավելի շուտ հենապատի նշանակություն ունեն[41]։ Պատերը շարված են փոքր չափերի անմշակ որձաքարով ու կրաշաղախով և տարբեր մասերում ուժեղացված են միաստիճան, երկաստիճան և եռաստիճան աշտարակաձև ելուստներով։ Ելուստների լայնությունները տարբեր են և տատանվում են 1,30—2,35 մ սահմաններում։ Նրանք տարբեր են նաև պատի ուղղագիծ հատվածներից զուրս եկած մասերով (0,65—1,30 մ)։ Պատերի առավելագույն բարձրությունը մոտավորապես 4 մ է և բոլոր մասերում էլ նրանք ժայռի հարթ մակերեսից վեր չեն բարձրանում։ Հարավային մասում պարիսպների հետքերն անգամ չեն նշմարվում, սակայն պետք է ենթադրել, որ պարիսպ եղել է։ Ամրոցը մուտք է ունեցել արևելքից և, հավանաբար, նաև արևմուտքից։ Պահպանվել է արևելքից ամրոց տանող ճանապարհի հյուսիսային եզրին շարված պատից մոտ 18 մ երկարությամբ մի հատված։ Ամրոցի զբաղեցրած նախկին տարածքի մասին դժվար է որոշակի բան ասել, նշենք միայն, որ պահպանված մասի եզրագծով և նրա ծայրակետերը միացնող ուղիղ գծով սահմանափակված մակերեսը մոտավորապես 550 քառ. մ է։

Ամրոցի պարսպապատերը ժայռի հետ միաձույլ են և հեռվից (դիտման մոտակա կետ չկա) ընկալվում են որպես նրա կողմնային մակերևույթի հատվածներ։ Պատերը չեն երևում նաև ամրոցի ներսից և որպեսզի նրանք նկատվեն, անհրաժեշտ է արևմտյան մասից, ժայռի անմիջապես լանջով մոտենալ նրանց։ Թերևս այս է եղել պատճառը, որ Մ. Բարխուտարյանցը պարսպապատը չի նկատել և նույնիսկ նրա գոյության մասին իր աշխատության մեջ ոչ մի հիշատակություն չունի[42]։

Եռաբուրգ ամրոց (աղ. II, գծ. 2)։ Գտնվում է քաղաքի հյուսիսային մասում, ճանապարհի արևելյան կողմի թեքադիր լանջին։ Այն ներքուստ քառանկյուն հատակագծով (առանցքային չափումներով 9,25×10,25 մ) մի կառույց է, որն ունի կոր եզրագծով աշտարակներ իր հարավ-արևմտյան, հարավ-արևելյան անկյուններում և հարավային պատի կենտրոնում։ Պատերը շարված են անմշակ որձաքարով և կրաշաղախով։ Վերանորոգման հետքեր չկան։ Հա-

---

40 Հնարավոր է, որ ժողովրդի մեջ տարածված այս անունը ստուգաբանվի ուղղակի իմաստով և ամրոցը ծառայած լինի նաև որպես դատաստանավայր, մանավանդ, որ նրա ներսը տեսանելի է Քաղաքատեղի գրեթե բոլոր մասերից և ժողովուրդը կարող էր ականատես լինել այնտեղ կատարվող գործողություններին։

41 Հատակագծի արևելյան հատվածը տեղում մոտենալու հնարավորություն չլինելու պատճառով գծված է մոտավոր հշտությամբ։

42 Մ. Բարխուտարյանց. Արցախ, էջ 222—224։

մեմատարար լավ վիճակում են պահպանվել պարսպապատերի (հաստությունը 0,9—0,95 մ) աշտարակներն ընդգրկող հատվածները։ Եթե արևելյան պատի մի մասը դեռ կա, ապա արևմտյանի հետքերն անգամ չեն երևում, իսկ



Նկ. 1. Իշխանական ապարանքի ընդհանուր տեսքը
Նկ. 2. Իշխանական ապարանքի ներքին տեսքը

հյուսիսային պատը նշմարվում է միայն ներսի կողմից։ Ներսը՝ մինչև պատերի վերին եզրը, լցված է հողով և առանց պեղումների անհնար է որոշակիացնել ներքին հատակաձևի տեսքը։ Ինչպես երևում է Մ. Բարխուտարյանցի նկարագրությունից, իր ժամանակ այն ավելի ամբողջական է եղել. «Կա մի մեծ շինություն, որ յուր արտաքին կողմում ունի երեք բուրգ, մեջտեղում տասն մետրաչափ բարձր քարուվիր սյուն և երկու մեծ սենյակներից բաղկացած շի-

նություն։ Այս է ամենից ավելի հնությունն, որ կարծես թե յուր ամրագին կազմվածքովն ներկայացնում է տեղիս հին իշխողի բնակարանը»[43]։

Աշտարակները դեպի վերև նեղանում են և դեպի ներս ունեն որոշ թեքություն։ Տեղանքի դիտարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ մուտքը եղել է արևմտյան կողմից։

Հյուսիսային աշտարակ (աղ. II, գծ. 3, նկ. 3)։ Գտնվում է բերդավանի հյուսիս-արևմտյան մասում, նրա տարածքը հյուսիսից եզրափակող ձորի ձախ ափի բարձունքում։ Ներկայումս կիսավեր է և այս վիճակում առավելագույն բարձրությունը մոտ 5 մ է։ Աշտարակը երկհարկանի է և կառուցված է անմշակ որձաքարով և կրաշաղախով։ Վերջին ժամանակներս արտաքին երեսպատման քարերը ամբողջովին հանել են։ Ողջ բարձրությամբ քանդված է շինության արևելյան հատվածը, մոտ 3 մ լայնությամբ։ Եթե առաջին հարկի թաղի մի մասը պահպանվել է և դա բավարար է նրա գոցվող լինելը տեսնելու համար, ապա երկրորդ հարկի ծածկից ոչինչ չի մնացել և անհնար է որոշել, թե այն ինչպիսին է եղել։ Կառույցի ստորին հարկը իրենից ներկայացնում է ներքուստ քառակուսի (կողմը՝ 3,5 մ) հատակագծով մի սենյակ, որն ունի մեկ մուտք հյուսիսից և դեպի դուրս նեղացող երկու լուսամուտ՝ հարավից և արևմուտքից։ Այստեղ արտաքին հատակաձևը որոշակի չէ։ Վերին հարկը հատակագծում կանոնավոր ութանկյուն է թե՛ ներսից (կողմը՝ 1,57 մ) և թե՛ դրսից և ունի երկու լուսամուտ՝ հյուսիսից և հարավից։ Մուտքը հավանաբար եղել է արևելակողմից։ Այստեղ պահպանվել են ծածկի թաղի ութանկյուն հիմքը տասնվեց անկյուն դարձնող միակտուր սալ քարերը (ութ անկյուններից վեցում)։

Հարավային աշտարակ (աղ. II, գծ. 4)։ Գտնվում է բերդավանի հարավարևմտյան ծայրում, նրա տարածքը հարավից եզրափակող ձորի աջ ափին։ Այն ունի երկու հարկ։ Ներկա վիճակում առավելագույն բարձրությունը կազմում է 5,55 մ։ Կառույցի ներքին և արտաքին մակերեսներից սրբատաշ քարերը գրեթե ամբողջությամբ հանված են։ Այդ տեսակետից քիչ է տուժել առաջին հարկի գմբեթային ծածկի ներքին մակերևույթը, որտեղ երեսպատման քարերը մեծ մասամբ մնում են։ Դատելով պատերի մակերեսներից հանված քարերի դեռևս երևացող հետքերից, շինությունը, բացի առաջին հարկի արտաքին ստորին մասից, հիմնականում կառուցված է եղել դեղնասպիտակավուն լավ մշակված որձաքարով։ Ամբողջովին փլված է երկրորդ հարկի ծածկը։ Աշտարակն արտաքինից բոլորակ է, որը ստորին մասում եզրափակվում է գետնից ոչ այնքան բարձր քառանիստ ծավալով։

Առաջին հարկը ներքուստ ունի հատակագծում խաչաձև (5,0×5,0 մ առանցքային չափումով) հորինվածք։ Չորս քառանկյուն հենախորշերով (խաչաթևերով) պարփակված կենտրոնական տարածությունը պսակված է գմբեթով։ Միակ մուտքը արևելակողմից է և ներսից ու դրսից վերջանում է հորիզոնական բարավորով։ Այն հետագայում գետնի վրա գոյացած հողի հաստ շերտով համարյա ամբողջովին արտաքինից փակվել է։ Մի լուսամուտ բացվում է արևմտյան խաչաթևից։ Հարավային պատը կենտրոնից քանդվել է, որի հետևանքով առաջացել է մի նեղ, մուտքանման բացվածք և հնարավոր է, որ լուսամուտ է բացվել նաև այստեղից։ Հենախորշերն ավարտվում են կտրվածքում երկկենտրոն թաղերով, որոնց եզրակամարներով ստեղծված դմբեթատակ քառակուսու կողի երկարությունը 3,17 մ է։ Փոխանցումը դմբեթատակ քառակուսուց դեպի կիսագնդաձև գմբեթի հիմքը իրականացված է առագաստներով։ Երկրորդ հարկը թե՛ ներսից և թե՛ դրսից բոլորակ է։ Ներսի բոլորակի տրամագիծը մոտ 5 մ է։ Այստեղ պատուհանները բացվել են հարավային, արևելյան և արևմտյան մասերից, իսկ մուտքը՝ հյուսիսից։

---

43 Նույն տեղում. էջ 223։ Այստեղ անհավանական է թվում կենտրոնում 10 մետրաչափ սյան գոյությունը։

Հայկական լեռնաշխարհում աշտարակաձև շինություններ կառուցվել է՝ կեռ ուրարտական շրջանում[44]։ «Հարավային Հայաստանում, Արևմտյան Տիգրիսի ակունքներից ոչ շատ հեռու գտնվող հայկական գյուղը նկարագրելիս



Նկ. 3. Հյուսիսային աշտարակը. նկ. 4. Հարավային ամրոցի պարսպապատի հատվածը

Քսենոֆոնը հիշում է աշտարակաձև տները (Անաբասիս, IV, 4, 2). սրանք բնակելի աշտարակներ են, որոնք, հավանաբար, կառուցված են ուրարտական նման շենքերի հետ»[45]։ Այժմ էլ, թե՛ Արցախում և թե՛ ներկայիս Հայաստանի

44 Գ. Տիրացյան. Փարաքարի աշտարակաձև դամբարանը և նման հուշարձաններ Առաջավոր Ասիայում.—«Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1970, № 1, էջ 234։

45 Նույն տեղում։

տարածքում պահպանվել են նմանատիպ բազմաթիվ հուշարձաններ։ Դրանց մի մասը իր աշխատության մեջ ներկայացրել է Թ. Թորամանյանը[46]։ «Աշտարակաձև կառույցների նշանակալից մասը հնարավոր է դասել ամրացված բնակելի տների շարքը, նրա մի ստվար խումբը կազմում են, այնուամենայնիվ, պաշտամունքային ընդհանուր նշանակություն ունեցող աշտարակաձև հուշարձանները՝ տաճարները և, հատկապես, դամբարանները։ Հանդիպում են նաև աշտարակաձև պահակակետեր, դիտման և ազդանշանային կայաններ, ամրացված ապաստանավայրեր»[47]։ Հակված ենք կարծելու, որ Քաղաքատեղի աշտարակաձև շինությունները ամրացված բնակելի տներ են եղել։

Բաղնիք (աղ. II, գծ. 6)։ Քաղաքատեղի բազմամարդ բնակչության և բարգավաճ կյանքի մասին է վկայում նաև բաղնիքը։ Հին Հայաստանում «բաղնիքներ լինում էին բոլոր պալատներում, ամրոցներում, քաղաքներում և մարդաշատ բնակավայրերում և ըստ օգտագործման ունեին մասնավոր կամ հասարակական բնույթ»[48]։ Դատելով ընդհանուր հատակագծում ավերակների գրաված դիրքից, այստեղ բաղնիքը ծառայել է բերդավանի ամբողջ բնակչությանը։

Համեմատաբար լավ վիճակում է մի պատով ժայռին կպած, 2,7×2,8 մ չափերի կիսաքանդ գոցվող թաղով շինությունը։ Սրա հարավային կողմից կառուցված 2,7×3,6 մ չափերի շինությունը ևս նման ծածկի հետքեր ունի։ Հիշյալ կառուցվածքների առջևի հարթ, բականման (5,95×12,6 մ) տարածքի հյուսիսային և արևմտյան կողմերում պահպանված պատերի մնացորդ-հատվածներով ընդհանուր հատակաձևը ուղղանկյան տեսք է ստանում։ Ներկա վիճակում հնարավոր չէ պարզել բաղնիքի առանձին բաժանմունքների տեղն ու ղերը, քանի որ հողի շերտով ծածկված կամ քանդված է պատերի մեծ մասը։ Միայն գոցվող թաղերով իրականացված գմբեթով շինության պատերի մանրամասներից (աղյուսաշեն փոքր խորշեր երեք պատերում՝ այժմյան հատակի բարձրությամբ, կավե խողովակների հետքեր, կիսաքանդ երդիկ) ելնելով կարելի է ասել, որ այն հավանաբար, եղել է լողարան[49]։ Բաղնիքը երևի տաքացվել է հնուց հայտնի՝ սյունիկների վրա բարձրացված հատակի և խողովակավոր պատերի միջոցով՝ հնոցից մղված տաք օդով ու ծխով[50]։ Տեղանքի պայմաններն այնպիսին են, որ ջուրը աղբյուրի առվից կարելի էր ինքնահոսով բերել բաղնիքի համապատասխան բաժանմունքը։

Հատակագծային հորինվածքի և առանձին մասերի չափերի առումով այս բաղնիքին նման է Գյուլիստան բերդի ստորոտում, Ինջա գետի ձախ ափին գտնվող կիսավեր բաղնիքը։ Վերջինս ունի բաժանմունքների ավելի ընդարձակ կազմ, բաղկացած 2,6×2,6 մ և 2,6×4,6 մ չափերի շինություններից՝ ուղղանկյուն բակի (5,95×9,5 մ) երեք կողմերում։

Կարծում ենք, որ Քաղաքատեղի բաղնիքը կառուցվել է մելիքական շրջանում՝ վերակառուցված ապարանքի, բնակելի, քաղաքացիական և պաշտպանական որոշ այլ շինությունների հետ։

Այսպես ուրեմն.

Ամբողջ միջնադարի ընթացքում ընդհատումներով գոյատևած բերդավանը եղել է գավառի իշխանական նստավայրերից մեկը, վերջին դարերում գառ-

---

46 Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. I, Երևան, 1942. էջ 10—11։

47 Գ. Տիրացյան. նշվ. աշխ., էջ 238։

48 О. Х. Халпахчьян. Гражданское зодчество Армении. М., 1971. с. 212—213.

49 Համա. նույն տեղում, գծ 163, 164։

50 Մաղավուզցի Վալերիկ Ավանեսյանի պատմելով, բաղնիքի հյուսիս-արևմտյան, ձորեզրին գտնվող անկյան հատակի տակ մինչև վերջերս եղել է աղյուսե սյունիկների վրա դրված այդպիսի հատակ այն բարձրությամբ, որ հնարավոր էր կիսապառկած սողոսկել մյուս սենյակների տակը։

նալով Ջրաբերդի մելիքության կարևոր ռազմաքաղաքական հենակետը (սրղնախը)՝ Ջրաբերդ ամրոցի հետ միասին։

Բերդավանը ուշմիջնադարյան քաղաքաշինության ուշագրավ օրինակ է, որտեղ փրենց արտահայտությունն են գտել դարաշրջանի (XVIII դար) քաղաքական իրավիճակը, ժամանակաշրջանին հատուկ անպաճույճ, գործնականանհրաժեշտությամբ թելադրված ճարտարապետական ձևերը, ոչ բարդ կառուցվածքային լուծումները։

Քաղաքատեղն ունի պաշտպանական համակարգի որոշակիորեն արտահայտված գծեր. այդ նպատակին են հարմարեցված եղել գրեթե բոլոր պահպանված շինությունները, հատակագծային կառուցվածքը, տեղադրությունը։

ГОРОДИЩЕ КАГАКАТЕГ В АРЦАХЕ

А. Б. ГУЛЯН, Р. С. АБГАРЯН

Резюме

Развалины городища Кагакатег или Майракагак находятся па правом берегу реки Тартар, на территории ссления Магавуз Мардакертского района НКАО. По библиографическим и историческим источникам, а также по архивным материалам выясняется, что городище (по всей вероятности, прежняя крепость Бердакур), существовавшее по соседству с крепостью Джраберд, в XVIII в. становится одним из важных центров армянской национально-освободительной борьбы. Перестроив древний замок, здесь основался джрабердский Мелик Адам Исраелян (1767—1783 гг.). Планировочная структура городища имеет рациональное экономическое и оборонительное расположение, вызванное географическими условиями местности. Жилые, хозяйственные и подсобные строения городища расположены вокруг трех основных оборонительных точек: княжеского замка-дворца и двух небольших крепостей по обе стороны замка. Примечательны два двухэтажных башнеобразных строения, которые, видимо, были укрепленными жилищами.